Սևանա լճի 2050թ. ազգային տեսլական

Երևան, 2023թ.

Բովանդակություն

Հապավումներ 3

1. Ներածություն 4

1.1. Տեսլականի նպատակները 4

1.2. Պատմական ակնարկ 4

1.3. Քաղված դասեր 5

1.4. Իրավական և կառավարման շրջանակներ 7

2. Տեսլականի մշակման մեթոդաբանություն 10

2.1. Տվյալների հավաքագրում և վերլուծություն 10

2.2. Տեսլականի հիմքում դրված արժեքներ և սկզբունքներ 12

3. Սևանա լճի 2050թ. ազգային տեսլական 14

3.1. Տեսլականում կիրառված հասկացությունների սահմանումներ 16

3.2. Տեսլականի ամրություն 18

3.2.1. Կայուն զարգացման նպատակներ 18

3.2.2. Կառավարության ծրագրեր, օրենսդրություն և ՀՀ միջազգային պարտավորություններ 22

4. Եզրակացություններ 24

Հավելվածներ 26

Աղյուսակներ

Աղյուսակ 1. Սևանա լճի ազգային տեսլականի կապը ԿԶՆ հետ 19

Աղյուսակ 2. ՀՀ ազգային օրենսդրություն և ստանձնած միջազգային պարտավորություններ, որոնք կապվում են . Սևանա լճի ազգային տեսլականի հետ 22

Գծապատկերներ

Գծապատկեր 1. Սևանի ազգային տեսլականի մշակման փուլերը 12

Գծապատկեր 2. Տեսլականի հիմքում դրված արժեքներ և սկզբունքներ 13

Գծապատկեր 3. Սևանա լճի 2050թ. ազգային տեսլական 15

Հապավումներ

ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակներ
ՀԷԿ	Հիդրոէլեկտրակայան
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՍՎՈԹ	Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների վերլուծություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ

Աշխատանքն իրականացվել է «Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանություն» (EU4Sevan) ծրագրի ՄԱԶԾ բաղադրիչի շրջանակում:

«Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանություն» (EU4Sevan) ծրագիրը համատեղ ֆինանսավորվում է Եվրոպական Միության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (ԳԴՀ ՏՀԶՆ) կողմից: Այն «ԵՄ-ը հանուն էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի» ԵՄ գործողության և ԳԴՀ ՏՀԶՆ-ի կողմից ֆինանսավորվող «ECOServe» ծրագրի մաս է կազմում: Ծրագիրն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ)-ի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից:

1. Ներածություն

1.1. Տեսլականի նպատակները

Սևանա լճի ազգային տեսլականը տարբեր շահագրգիռ կողմերի համար ընդունելի՝ Սևանա լճի հետ կապված այն բնապահպանական, տնտեսական և սոցիալական նպատակների ամփոփումն է, որոնք պետք է նվաճվեն միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում: Դրանք, մասնավորապես, սահմանվել են 2050թ. համար, քանի որ նշված ժամկետը համընկնում է տարբեր ազգային և միջազգային պլանավորման գործընթացների հետ, ներառյալ Փարիզյան համաձայնագրի ներքո ազգային մակարդակով սահմանված նպատակները:

Մասնակցային ձևաչափով մշակված տեսլականը հիմք կհանդիսանա Սևանա լճի հետ կապված օրենսդրական, պլանավորման, կառավարչական և այլ լուծումների համար, կտեղեկացնի դրանց ընթացքը՝ ուղենիշ դառնալով այն գործողությունների համար, որոնք որևէ կերպ ազդեցություն կունենան լճի վրա կամ կկրեն դրա ազդեցությունը: Տեսլականին հասնելու տեսակետից կարևորագույն նշանակություն ունեն համապատասխան գործողությունների ծրագրի մշակումը և իրականացումը, ինչպես նաև անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները:

1.2. Պատմական ակնարկ

Սևանա լիճը Հայաստանի համար ունի մեծ բնապահպանական, պատմական, մշակութային և տնտեսական արժեք, քանի որ կարևոր էկոհամակարգ է, ինչպես նաև խմելու և ոռոգման ջրի և էներգիայի արտադրության աղբյուր: Այն նաև կարևոր դեր ունի Հայաստանի բնակչության հանգստի կազմակերպման առումով: Միևնույն ժամանակ, վերջին տասնամյակների ընթացքում ինտենսիվ և ոչ կայուն օգտագործման արդյունքում զգալիորեն վատթարացել է ջրի որակը:

Լճին սպառնում են բազմաթիվ բնապահպանական մարտահրավերներ, այդ թվում կենսաբազմազանության կորուստը: Լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնումն ու պահպանումը, ինչպես նաև դրա պաշտպանությունն ու կայուն օգտագործումը կարևոր առաջնահերթություններ են ՀՀ կառավարության համար՝ կլիմայի և շրջակա միջավայրի ոլորտներում:

Հայաստանի կառավարությունն ընդունում է Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման կարևորությունը և ավելի քան երկու տասնամյակ ներդրումներ է կատարում այդ նպատակով ինստիտուցիոնալ և օրենսդրական շրջանակի զարգացման, ինչպես նաև գործողությունների ծրագրի մշակման ուղղությամբ: Մասնավորապես ձեռնարկվել են մի շարք քայլեր ջրի մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ համաձայն 1996-1998թթ. «Սևանա լճի էկոլոգիական

հավասարակշռության վերականգնման ծրագրի» և «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքի դրույթների: Լճի ջրային ռեսուրսները համալրելու նպատակով գործարկվել են երկու թունելներ, իսկ ոռոգման և էներգիայի արտադրության նպատակներով Հրազդան գետի միջոցով բացթողնվող ջրի ծավալի համար սահմանվել են սահմանաչափեր: Արդյունքում 2002թ. հունվարի 1-ի համեմատ, երբ լճի բացարձակ բարձրությունը եղել է 1896,32 մ, լճի մակարդակն աճել է ավելի քան չորս մետրով: 2022թ. հունվարի 1-ի դրությամբ Սևանա լճի բացարձակ բարձրությունը եղել է շուրջ 1900,43 մ:

Սևանի ջրհավաք ավազանում (Գեղարքունիքի մարզի սահմաններում) անտառների մակերեսը կազմում է մոտ 17.000 հա, ներառյալ 12.000 հա արհեստական տնկարկները, որոնք հիմնականում կազմված են սոճուց, բարդուց, ակացիայից և չիչխանից: Ջրի մակարդակի վերջին տարիների բարձրացումը բացասական է ազդել շրջակա անտառային տարածքների վրա (մոտ 4.000 հա), ակնառու է նաև ջրածածկ անտառտնկարկների քայքայման բացասական ազդեցությունը լճի ջրի որակի վրա, քանի որ ցամաքային բուսականության փտման արդյունքում առաջացող օրգանական նյութերի ներհոսքը նպաստում է լճի էվտրոֆացմանը:

Հաշվի առնելով այս հանգամանքը՝ սկսած 2005թ. ՀՀ կառավարությունն ափերի մաքրման իրականացման վերաբերյալ դրույթներ է ավելացրել «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքում, որոնց համաձայն 2005-2020թթ. նախատեսվել է մաքրել մոտ 5.000 հա անտառ, ներառյալ կոճղերի հեռացումը, և տնկել նոր անտառաշերտեր:

Այնուամենայնիվ, ոչ համարժեք և մասնատված պլանավորումը, միջոլորտային թույլ համակարգումը, մշտադիտարկման, վերահսկողական և իրավակիրարկման անարդյունավետ մեխանիզմները, ինչպես նաև ոչ արդիական և տարբեր ոլորտների միջև չներդաշնակեցված քաղաքականությունների շրջանակն առայժմ թույլ չեն տալիս հասնել Սևանա լճի ավազանի կայուն կառավարման նպատակին:

1.3. Քաղված դասեր

Համակարգային կառավարում: Ինստիտուցիոնալ մակարդակում չկա Սևանին վերաբերող տարբեր մարմինների ու կառույցների գործունեությունը համակարգող միասնական մարմին, որը կկարողանար արդյունավետ համակարգել պլանավորման աշխատանքները, ներդաշնակեցնել հակադրվող շահերը:

Գործողությունների պլանավորման անկատարություն: Ծրագրային միջոցառումների մասով հաճախ բացակայում են հստակ շրջանակներ, կատարման ժամկետներ, բյուջե ու ֆինանսավորման աղբյուրներ, իսկ իրականացվող ծրագրերի մասով չկան մշտադիտարկման

հստակ մեխանիզմներ: Սևանա լճի հետ կապված գործողությունների պլանավորման գործընթացները հաճախ հաշվի չեն առնում երկարաժամկետ հեռանկարով իրականացվելիք քայլերի երկարաժամկետ ազդեցությունները, ինչն իր հերթին կարող է հանգեցնել լրացուցիչ ծախսերի:

Ֆինանսավորման պակաս: Տարիների ընթացքում գնալով ավելացել է մշտադիտարկման, վերահսկողության ու վերականգնողական միջոցառումների ֆինանսական կարիքների ու փաստացի ֆինանսավորման խզվածքը. ըստ շահագրգիռ կողմերի հետ հանդիպումների ընթացքում հնչեցված կարծիքների՝ ներկայում օբյեկտիվ կարիքներն էապես գերազանցում են տրամադրող ֆինանսավորման ծավալները:

Աղտոտման կանխարգելման պակաս: Փաստացի գործուն քայլեր չեն իրականացվում կեղտաջրերի ու աղբավայրերի արդյունավետ կառավարման ու մաքրման ուղղությամբ, ինչը հանգեցնում է դեպի լիճ օրգանական նյութերի ու այլ աղտոտիչների անվերահսկելի հոսքի:

Կառուցապատման ոչ ճկուն սահմանափակումներ: Հողային օրենսգրքի ու քաղաքաշինական կարգավորումների ուժով էապես սահմանափակվում է տնտեսական գործունեությունն ափամերձ գոտիներում, որը, սակայն, գործնականում որևէ կերպ չի լուծում ափամերձ տարածքների հախուռն ու անկանոն կառուցապատման ու տնտեսական շահագործման խնդիրները և միաժամանակ թույլ չի տալիս ճկուն լուծումներ հողամասերի կանոնակարգված ու վերահսկվող կառուցապատման տնտեսական շահագործման համար, ինչը թույլ կտար պետության ու մասնավոր հատվածի համար կանխատեսելի կերպով իրականացնել նոր տնտեսական ծրագրեր (հանգստի գոտիներ, հյուրանոցներ և այլն):

Համապատասխան միջազգային փորձի ուսումնասիրման անհրաժեշտություն: Չնայած նրան որ Սևանա լճի հետ կապված խնդիրները որպես ամբողջություն խիստ առանձնահատուկ են, անհրաժեշտ է առավել խորն ուսումնասիրել այլ երկրների փորձը՝ կապված մասնավորապես բազմաշերտ և մեծ թվով շահագրգիռ կողմերի հետ աշխատանք պահանջող համակարգերի կառավարման, էկոհամակարգային ծառայությունների արդյունավետ կառավարման, կոնֆլիկտային շահերի “հաշտեցման” և Սևանա լճին առնչվող այլ խնդիրների հետ:

Այլընտրանքային լուծումների ֆինանսատնտեսական գնահատականների բացակայություն: Որոշումների կայացման ընթացքում հաճախ չեն ուսումնասիրվել այլընտրանքային լուծումները և դրանց ֆինանսատնտեսական ցուցանիշները: Արդյունքում դրանց օգուտները և դրանց հետ կապված ծախսերը չեն համեմատվել միմյանց հետ:

Որոշումների կայացման ոչ բավարար մասնակցայնություն: Սևանա լճի հետ կապված որոշումները հիմնականում կայացվել են առանց շահագրգիռ կողմերի լայն շրջանակի հետ քննարկումների. արդյունքում հաճախ խնդիրներ են առաջացել կայացված որոշումների իրականացման փուլում:

Ոլորտային քաղաքականություններում Սևանա լճի հետ կապված դրույթների բացակայություն: Սևանա լճի վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունեցող կամ դրա ազդեցությունը կրող ոլորտների համար մշակվող քաղաքականությունները և պլանավորման գործիքները հիմնականում չեն պարունակում լճի վերաբերյալ դրույթներ, դրանցում չեն բացահայտվում Սևանա լճի հնարավոր ազդեցությունները կամ կայացվող որոշումների ազդեցությունը լճի վրա: Արդյունքում տեղ են գտնում միմյանց հակասող նպատակներ և թիրախներ, ինչն էապես ազդում է կատարվող աշխատանքների արդյունավետության վրա:

Միջգերատեսչական համագործակցության անկատարություն: Պետական կառավարման մարմինները, իրականացնելով սեփական գործառույթները, հաճախ չեն ցանկանում ներգրավվել "օտար" գործառույթների հետ կապված աշխատանքներում, հատկապես եթե դրանց հետ կապված չկան հստակ հանձնարարականներ: Իսկ վերջինի պարագայում մասնակցությունը հաճախ կրում է ֆորմալ բնույթ:

Համակարգված հաղորդակցության բացակայություն: Սևանա լճի խնդրի հետ կապակցված շահագրգիռ կողմերի հաղորդակցության պարբերական կազմակերպման համակարգային մոտեցումների բացակայություն: Նշված խնդրի պատճառով տուժում է իրազեկման գործընթացը:

Օրենսդրական պահանջների հաղորդակցության անբավարար մակարդակ: Հաճախ շահագրգիռ կողմերը, այդ թվում Գեղարքունիքի մարզի համայնքներն ու լայն հանրությունը, չունեն բավարար տեղեկություններ բազմաթիվ օրենքների, նախագծերի, արգելքների ու իրավունքների վերաբերյալ, որոնք անմիջական ազդեցություն ունեն Սևանա լճի և նշված թիրախային խմբերի կյանքի որակի վրա:

Սոցիալ-տնտեսական ներուժի թերի օգտագործում: Սևանի ջրհավաք ավազանի բնակչության սոցիալ-տնտեսական ներուժն ամբողջովին բացահայտված և օգտագործված չէ. միևնույն ժամանակ Սևանի ջրավազանի բնակիչները հիմնականում ապրում են աղքատության պայմաններում:

1.4. Իրավական և կառավարման շրջանակներ

Իրավական շրջանակի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա են մեծաքանակ իրավական ակտեր, որոնք կարգավորում են Սևանա լճի հետ կապված հիմնական հարցերը, ներառյալ ջրային պաշարները, ջրի որակը, կենսաբազմազանությունը, քաղաքաշինական ու տնտեսական գործունեությունը և վերահսկողությունը, սակայն դրանք համահունչ չեն առկա մարտահրավերներին կամ ունեն էական բացեր:

Անմիջապես Սևանա լճին նվիրված օրենսդրության հիմքում առավել մեծ կարևորություն է տրվում լճի դերին որպես քաղցրահամ ջրի պաշարի, այնուհետև՝ որպես էկոհամակարգի, դրա հետ կապված բնապահպանական հիմախնդիրներով: Տնտեսական ու սոցիալական

խնդիրներին տրված է նվազ նշանակություն, ինչը չի համապատասխանում կայուն զարգացման սկզբունքներին, ինչպես նաև ոչ բարենպաստ նախադրյալներ է ստեղծում հակադրվող տնտեսական, բնապահպանական ու սոցիալական շահերի կառավարման ու հանգուցալուծման համար: Սակայն գործնականում պատկերը հակառակն է, և բնապահպանական խնդիրները հաճախ ստորադասվում են տնտեսական և սոցիալական խնդիրներին:

Ծրագրային մակարդակում "Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին" ՀՀ օրենքը պահանջում է կառավարությունից սահմանել համալիր ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման տարեկան համամասնությունները ու դրանք արտացոլել տարեկան ծրագրերում, սակայն փաստացի տարեկան ծրագրերը, որպես կանոն, չեն պարունակում տվյալներ նախատեսված աշխատանքների փաստացի կատարման աստիճանի ու ըստ տարիների կատարման ենթակա համամասնությունների մասին: Ավելին, նշված օրենքն ու դրա շրջանակներում ընդունված ենթաօրենսդրական ակտերը չեն սահմանում մշտադիտարկման կարգ, պայմաններ ու մեթոդաբանություն:

Էկոհամակարգի վրա փսասակար ազդեցությանը վերաբերող կարգավորումներում չկան վերահսկողության ու պատասխանատվության հստակ մեխանիզմներ: Ավելին, էկոհամակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի մասով առկա կարգավորումներից պարզ չէ՝ արդյոք առանձին նյութերի կիրառման արգելքը բացարձակ է, ու արդյոք տարածքային առումով այն կիրառվում է ամբողջ ջրահավաք ավազանի վրա:

Կեղտաջրերին վերաբերվող կարգավորումները չունեն մինչ դրանց ընդունումը կառուցված օբյեկտների մասով կիրառման գործուն մեխանիզմներ և չեն սահմանում լիճ բացթողնվող կեղտաջրերի նորմատիփեր:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ ու 17-րդ հոդվածների համաձայն՝ արգելոցի (կամ հատկապես ազգային պարկի) տարածքում արգելվում է մի շարք գործողություններ ու գործունեության տեսակներ, որոնք կարող են փսաս հասցնել էկոհամակարգին: Հաշվի առնելով, որ առանձին տեսակի գործողություններ ու գործունեության տեսակներ խնդրահարույց են առհասարակ Սևանա լճի ջրհավաք ավազանի ողջ տարածքում, դրանց ազդեցության նվազեցման տեսակետից անհրաժեշտ է ուսումնասիրել Սևանա լճի ամբողջ ջրհավաք ավազանի վրա որոշ արգելքների տարածման նպատակահարմարությունը: Այս օրենքի մասով նաև առկա է անորոշություն առ այն, թե որքանով են էկոհամակարգի բնօգտագործման և բնական միջավայրի պահպանության ռեժիմները կիրառելի անմիջական ազդեցության գոտու նկատմամբ:

Վերահսկման առումով խնդրահարույց է Սևանա լճի էկոհամակարգում սիգի արդյունահանման թույլատրված չափաքանակի և արգելված նյութերի թույլատրելի սահմանաչափերի մասով վերահսկողությունը՝ ինչպես վերահսկող մարմինների կարողությունների, նյութական հագեցվածության, այնպես էլ տարբեր մարմինների միջև դերերի տարանջատման և մարդկային ու նյութական ռեսուրսների համատեղ կիրառմամբ արդյունավետ համագործակցության առումով:

Օրենսդրական, ռազմավարական պլանավորման և կառավարչական անորոշությունների ու անարդյունավետությունների հետ կապված լուծումները տեսլականի մշակման և դրանով սահմանված նպատակների նվաճման կարևորագույն տարրերից են, ուստի EU4Sevan ծրագրով նախատեսված հետագա քայլերի ընթացքում դրանք կարժանանան հատուկ ուշադրության:

2. Տեսլականի մշակման մեթոդաբանություն

Սևանա լճի տեսլականի մշակումը եղել է խիստ մասնակցային, և գործընթացում ներգրավվել են հասարակության տարբեր շերտեր, կառավարման տարբեր մակարդակներ, հաճախ հակադիր շահեր և կարծիքներ ունեցող այլ շահագրգիռ կողմեր: Այսպիսով հնարավոր է եղել թե՛ բացահայտել Սևանա լճի ապագայի վերաբերյալ տարբեր պատկերացումները, թե՛ միևնույն ժամանակ իրականացնել առանցքային շահագրգիռ կողմերի իրազեկում տեսլականի մշակման նպատակների և գործընթացի վերաբերյալ՝ այդպիսով որոշ չափով մեղմելով տեսլականին հասնելու ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերի նկատմամբ հնարավոր ապագա հակազդեցությունը:

2.1. Տվյալների հավաքագրում և վերլուծություն

Տեսլականի մշակման առաջին փուլում ամփոփվել են Սևանա լճի հետ կապված ելակետային տեղեկությունները, իրականացվել է համապատասխան իրավական դաշտի վերլուծություն, ուրվագծվել է առկա և ապագա այն խնդիրների շրջանակը, որոնք պետք է լուծել Սևանա լճի առողջացման, դրա էկոհամակարգային ծառայությունների առավել կայուն և արդյունավետ օգտագործման նպատակով: Ներկայացվել են այն օբյեկտիվ սահմանափակումները, հասանելի տվյալները, պատճառահետևանքային կապերի վերհանման վերաբերյալ տեղեկությունները, որոնք պետք է հիմք հանդիսանան տեսլականի մշակման հետագա քայլերի համար:

Բացի այդ, իրականացվել է շահագրգիռ կողմերի վերլուծություն՝ ըստ դրանց դերերի և բարձրացված խնդիրների և մտավախությունների, ուսումնասիրվել են Սևանա լճի կառավարման հաջողությունները, վերլուծության են ենթարկվել Սևանա լճի հետ կապված կոնֆլիկտային շահերը, նույնականացվել են առկա և կանխատեսվող մարտահրավերները և քաղված դասերը:

Շահագրգիռ կողմերի հետ քննարկումներն իրականացվել են մի քանի փուլերով, որոնցից առաջինը հիմնականում ծառայել է Սևանի լճի հետ կապված տարատեսակ տվյալների հավաքագրման նպատակին՝ նախապես մշակված հարցաշարի օգտագործմամբ՝ ապահովելով տարբեր շահագրգիռ կողմերի հետ քննարկումների առանցքային տարրերի միասնականությունը:

Քննարկումների արդյունքների ամփոփումից և վերլուծությունից հետո Սևանի ապագայի վերաբերյալ շահագրգիռ կողմերի պատկերացումների վերհանման նպատակով մշակվել են Սևանա լճի հնարավոր զարգացման երեք սցենարներ: Առանձին-առանձին լինելով հակասական՝ դրանք խթանել են քննարկումները և օգնել են բացահայտել լճի և դրա ապագայի վերաբերյալ հաճախ կոնֆլիկտային պատկերացումները և վերջինների հիմքում ընկած պատճառները:

Այս փուլում իրականացվել են հանդիպումներ գիտական, պետական կառավարման և հասարակական կառույցների, Գեղարքունիքի մարզի հինգ խոշորացված համայնքների և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչների հետ: Նշված հանդիպումների ընթացքում ներկայացվել են մշակված երեք սցենարները, որից հետո հանդիպումների մասնակիցները բաժանվել են երեք խմբերի՝ առանձին սցենարների ուժեղ ու թույլ կողմերը և հնարավորությունները վերլուծելու նպատակով (SWOT վերլուծություն): Այնուհետև յուրաքանչյուր խումբ ներկայացրել է համապատասխան սցենարի վերլուծության արդյունքները, որին հետևել է դրանց վերաբերյալ կարծիքների փոխանակում:

Սցենարների և դրանց առանձին տարրերի վերաբերյալ քննարկումների մասնակիցների անհատական կարծիքների վերհանման նպատակով իրականացվել է հարցում նախապես մշակված հարցաշարի միջոցով: Մասնավորապես առաջարկվել է գնահատել երեք սցենարների բոլոր տարրերի ընդհանուր ազդեցության մակարդակը, ինչպես նաև այդ ազդեցության բնույթը՝ խիստ բացասականից մինչև խիստ դրական:

SWOT և հարցաշարերի արդյունքների վերլուծությունները դարձել են Սևանա լճի ազգային տեսլականի մշակման հիմքում դրված առանցքային տարրերից մեկը՝ գիտական հանրության առաջարկների և պատկերացումների հետ մեկտեղ:

Սևանի տեսլականի մշակման գործընթացն ըստ փուլերի ներկայացված է ստորև՝

Գծապատկեր 1. Սևանի ազգային տեսլականի մշակման փուլերը



2.2. Տեսլականի հիմքում դրված արժեքներ և սկզբունքներ

Սևանա լճի ազգային տեսլականի մշակման հիմքում դրված արժեքները և սկզբունքները, որոնք ընտրվել են ելակետային իրավիճակի վերլուծության և շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում, ներառում են հետևյալը.

Գծապատկեր 2. Տեսլականի հիմքում դրված արժեքներ և սկզբունքներ



3. Սևանա լճի 2050թ. ազգային տեսլական

Շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, գիտական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ տարբեր ձևաչափերով կազմակերպված քննարկումների արդյունքների, Սևանա լճի վերաբերյալ առկա ուսումնասիրությունների, պլանավորման փաստաթղթերի, Հայաստանի Հանրապետության ոլորտային առաջնահերթությունները սահմանող փաստաթղթերի վերլուծության հիման վրա Սևանա լճի ազգային տեսլականը սահմանվել է հետևյալ կերպ.

Սևանա լիճը բարձրագույն արժեք է Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի/ողջ հայության համար:

Սևանա լիճն առողջ, կայուն էկոհամակարգ է և ռազմավարական ռեսուրս, որի գիտահեն, արդիական և ներառական կառավարման կարևոր բաղադրիչներն են լճի ջրհավաք ավազանի համայնքների բարեկեցությունը և Հայաստանի Հանրապետության անվտանգային, բնապահպանական, մշակութային, տնտեսական և սոցիալական առաջնահերթությունները:

Ազգային տեսլականն արտացոլում է իրականացված բոլոր քննարկումներում հնչող կարծիքը, որ Սևանա լիճը հայ ժողովրդի մեծագույն արժեքներից մեկն է՝ դասվելով դրա պատմական, մշակութային և բնական ժառանգության առանցքային տարրերի շարքին:

Այն պատկանում է ոչ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, այլ նաև տարբեր երկրներում բնակվող, այլ պետությունների քաղաքացիներ հանդիսացող բոլոր հայերին: Սևան և Սևանա անձնանունների լայնորեն տարածված լինելը հատկապես Սփյուռքում վերոգրյալի ապացույցներից է:

Գծապատկեր 3. Սևանա լճի 2050թ. ազգային տեսլական[1]

[1] Պատկերում յուրաքանչյուր մակարդակ խորհրդանշում է տեսլականի բաղադրիչները: Առաջին (արտաքին) մակարդակը գիտականն է: Այս մակարդակի հիմքի վրա կառուցվում են մնացած բոլոր մոտեցումները, ինչը խորհրդանշում է գիտահեն որոշումների կայացման գործընթացը: Երկրորդ մակարդակում նորարարական լուծումների խթանումն ու արդիական կառավարումն են: Այս մակարդակը խորհրդանշում է տնտեսական և սոցիալական առաջնահերթությունները: Սևանի տեսլականի և տեսլականը խորհրդանշող պատկերի սրտում՝ երրորդ մակարդակում, համայնքի և էկոհամակարգի բարեկեցությունն է, մշակութային, բնապահպանական առաջնահերթություններն ու գենդերային հավասարությունը: Այս մակարդակը նաև խորհրդանշում է ներառական որոշումների կայացման մոդելը:

3.1. Տեսլականում կիրառված հասկացությունների սահմանումներ

Հաշվի առնելով Սևանա լճի ազգային տեսլականում կիրառված ձևակերպումների և հասկացությունների միասնական ընկալման կարևորությունը Սևանա լճի հետ կապված ծրագրերի հետագա մշակման և իրականացման համար՝ ստորև ներկայացված են նշված ձևակերպումների և հասկացությունների սահմանումները:

Սևանա լճի էկոհամակարգ. տեսլականի համատեքստում Սևանա լճի էկոհամակարգ ասելով հասկացվում է բուն լճի ծավալը որպես ջրաբանական օբյեկտ, լիճը սնուցող ջրհավաք ավազանը, նշված երկու միջավայրերում գոյություն ունեցող կենսաբազմազանությունը, Սևանա լճին բնորոշ բաղադրության նստվածքները, քիմիական բաղադրությունը և ֆիզիկական պարամետրերը, ինչպես նաև կենսաբանական արտադրողականության որոշակի ցուցանիշները և յուրահատուկ պայմանները:

Առողջ էկոհամակարգ. սույն համատեքստում «առողջ» հասկացությունը մեկնաբանվում է որպես մի վիճակ, որը բնորոշ է <u>օլիգոտրոֆ</u> լճերին՝ հանքանյութերի սակավ պարունակությամբ և սննդանյութերի ցածր պարունակությամբ:

Կայուն էկոհամակարգ. Էկոհամակարգերը, անկախ նրանից լճային են, թե այլ, բնական վիճակում գտնվում են որոշակի հավասարակշռության մեջ: Այս հավասարակշռությունը ստատիկ չէ և ունի տատանումների որոշակի լայնույթ: Վերջինիս լայնույթի չափը բնութագրում է էկոհամակարգի կայունությունը, ինչն, ի թիվս այլ գործոնների, կարևոր նշանակություն ունի էկոհամակարգի գոյության համար: Սկսած 2000-ականներից Սևանա լճի մակարդակի բարձրացումն ուղեկցվել է խիստ արտահայտված էկոհամակարգային անկայունությամբ: Մասնավորապես, Սևանա լճի մակարդակի ներտարեկան տատանումները կազմում են շուրջ 50 սմ, ինչը էկոհամակարգային կայունության տեսանկյունից լիճը փաստացի դարձնում է սեզոնային կարգավորվող ջրամբարին բնորոշ ջրավազան:

Գիտահեն կառավարում հասկացությունը գիտահեն որոշումների կայացման գործընթաց է: Այն ենթադրում է հնարավոր լավագույն տարբերակների ընտրությամբ գործողությունների իրականացման հաջորդականություն, ինչի հիմքում ընկած են համապարփակ ու համեմատելի տվյալների առկայությունը, տվյալների հիման վրա կատարված վերլուծությունները, վերլուծությունների հիման վրա կատարված հետազոտությունները և այդ հետազոտությունների արդյունքները: Տվյալները պետք է հավաքագրվեն շարունակաբար և համապարփակ մոնիտորինգի համար բավական հաճախականությամբ:

Ներառական կառավարում եզրույթի հիմքում ընկած են երկու կարևոր բաղադրիչներ: Առաջինը շահագրգիռ կողմերի, ներառյալ ՀԿ-ների, տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքների, համայնքային հաստատությունների, հետազոտական կենտրոնների և այլոց ազդեցության ապահովումն է: Երկրորդը շարունակական իրազեկումն է, որը ենթադրում է տարատեսակ միջոցառումներ ուղղված շահագրգիռ կողմերին, ինչպես նաև նախագծված և հարմարեցված յուրաքանչյուր թիրախային լսարանի համար: Իրազեկման

միջոցառումների հեղինակներն են ոչ միայն պետական, այլ նաև տեղական ինքնակառավարման մարմինները:

Արդիական կառավարում եզրույթը ենթադրում է կառավարման շրջանակներում միջազգային լավագույն փորձի շարունակական ուսումնասիրություն ու կիրառում (մշտապես հաշվի առնելով նաև տեղական առանձնահատկությունները) մասնավորապես միջոլորտային համակարգման, ինչպես նաև գործառույթների տարանջատման առումներով՝ բնապահպանական, սոցիալական ու տնտեսական առաջնահերթություններն առավել արդյունավետ իրագործելու ու հավասարակշռելու համար:

Կառավարումն իր մեջ անխուսափելիորեն ներառում է նաև **կարգավորում** (ներառյալ ինչպես օրենսդրական կարգավորումները, այդպես էլ դրանց մասով առկա իրավակիրառ պրակտիկան): Հաշվի առնելով ուսումնասիրված լավագույն փորձը (այդ թվում՝ ներառականության մասով), ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի պահանջները՝ կարգավորումը պետք է կիրառվի ու ներազդի անձանց վրա միայն այնքան, որքան անհրաժեշտ է կարգավորման (լայն իմաստով՝ կառավարման) իրավաչափ նպատակներին հասնելու համար: Ցանկացած կարգավորում պետք է ընտրվի նախապես գնահատելով դրա և հնարավոր այլընտրանքների (այլ կարգավորումներ, կարգավորման բացակայություն) սոցիալական (ներառյալ առողջապահության, տարածքային զարգացման, աշխատաշուկայի վրա ազդեցություն), տնտեսական (ներառյալ մրցակցության ու ՓՄՁ վրա ազդեցություն), շրջակա միջավայրի, պետական ու համայնքային բյուջեների վրա ազդեցությունները (կարգավորման ազդեցության գնահատում): Ընդ որում գնահատումը պետք է իրականացվի ոչ միայն մինչ կարգավորման ներդրումը, այլ նաև դրա կիրառման ընթացքում՝ պարբերաբար:

Ջրհավաք ավազան հասկացությունը սահմանում է ոչ միայն Սևանա լճի բնական ջրհավաք ավազանը, այլ նաև Արփա և Եղեգիս գետերի վերին հոսանքները, որոնցից Արփա-Սևան թունելի միջոցով ջուր է տեղափոխվում դեպի Սևանա լիճ: Որոտան-Արփա թունելի գործարկման դեպքում այն պետք է ներառի նաև Որոտան գետի վերին հոսանքը:

Ռազմավարական ռեսուրս են պետության հիմախնդիրների (օրինակ՝ պարենային անվտանգություն, քաղաքացիների հիմական կարիքների բավարարում, ջրային էկոհամակարգերի պահպանում և այլն) կայուն և երկարաժամկետ լուծումների համար անհրաժեշտ միջոցները:

Բնապահպանական առաջնահերթություններ են Հայաստանի Հանրապետության միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացման ռազմավարական ծրագրերում ներառված այն ուղղություններն ու գործողությունները, որոնք միտված են շրջակա միջավայրի պահպանմանը, բնապահպանական խնդիրների լուծմանը, ինչպես նաև կլիմայի փոփոխության մեղմմանը և հարմարվողականությանը:

Մշակութային առաջնահերթությունները տվյալ փաստաթղթի համատեքստում առաջին հերթին ենթադրում են պատմամշակութային ժառանգության պահպանումը, ինչի շնորհիվ պահպանվում են Սևանա լճի ջրհավաք ավազանին բնորոշ հատկանիշներն ու կապը պատմական արժեքների հետ, ինչն իր հերթին նպաստում է կյանքի որակի բարձրացմանը: Մշակութային ժառանգության պահպանման հիմքում ֆիզիկական և ավանդութային ժառանգության անձեռնմխելիությունն է այն գործոնների դեմ, որոնք ուղղված են այդ ժառանգության ոչնչացմանը կամ ձևափոխմանը:

Տնտեսական առաջնահերթություններ են Հայաստանի Հանրապետության միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացման ռազմավարական ծրագրերում (ներառյալ ոլորտային ռազմավարություններում) շեշտադրված այն ուղղություններն ու գործողությունները, որոնց միջոցով նախատեսվում է ապահովել երկրի տնտեսական կայունությունն ու զարգացումը:

Սոցիալական առաջնահերթություններ են Հայաստանի Հանրապետության բնակչության սոցիալական ապահովության ոլորտին առնչվող ռազմավարություններում և ծրագրերում շեշտադրված ուղղություններն ու գործողությունները:

Անվտանգային առաջնահերթություններ են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության[2] ներքո սահմանված Հայաստանի հիմնարար ազգային շահերը, ներառյալ.

- Հայաստանի անկախության, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և Արցախի անվտանգության ապահովումը,
- Խաղաղության և միջազգային փոխգործակցության ամրապնդումը,
- Ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ապահովումը, և
- ՀՀ քաղաքացիների անվտանգության և բարեկեցության ապահովումը, ինչպես նաև երկրի կայուն տնտեսական զարգացումը:

3.2. Տեսլականի ամրություն

Ստորև ներկայացված է Սևանա լճի ազգային տեսլականի կապը Կայուն զարգացման նպատակների, ինչպես նաև ազգային պլանավորման գործընթացների ու օրենսդրության հետ:

3.2.1. Կայուն զարգացման նպատակներ

Կայուն զարգացման նպատակների հետ Սևանա լճի ազգային տեսլականի կապը գնահատվել է ըստ առանձին նպատակների՝ հաշվի առնելով նպատակների և տեսլականում օգտագործված եզրույթների սահմանումները: Համապատասխան կապերն ավելի մանրամասն նկարագրված են ստորև աղյուսակում:

[2] https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf

Աղյուսակ 1. Սևանա լճի ազգային տեսլականի կապը ԿԶՆ հետ

1 NO POVERTY	Ոչ աղքատությանը	2020թ. աղքատության մակարդակը Գեղարքունիքի մարզում կազմել է 48,1%՝ ամենաբարձր ցուցանիշը երկրում: Տեսլականը ենթադրում է, որ Սևանա լճի կառավարման գործընթացներում պետք է հաշվի առնվեն լճի ջրհավաք ավազանի համայնքների բարեկեցությունը, ինչպես նաև ՀՀ տնտեսական և սոցիալական առաջնահերթությունները:
2 ZERO HUNGER	Ոչ սովին	Ծայրահեղ (պարենային) աղքատության մակարդակը 2020թ. Գեղարքունիքի մարզում կազմել է 1,9%: Տեսլականը ենթադրում է, որ Սևանա լճի կառավարման գործընթացներում պետք է հաշվի առնվեն լճի ջրհավաք ավազանի համայնքների բարեկեցությունը, ինչպես նաև ՀՀ տնտեսական և սոցիալական առաջնահերթությունները:
3 GOOD HEALTH AND WELL-BEING	Առողջություն և բարեկեցություն	Սևանա լճում կապտականաչ ջրիմուռների ծաղկման ինտենսիվացումը վերջին տարիներին կարող է բացասական ազդեցություն ունենալ մարդու առողջության վրա: Տեսլականը ենթադրում է, որ Սևանա լճի կառավարման գործընթացներում պետք է հաշվի առնվեն լճի ջրհավաք ավազանի համայնքների բարեկեցությունը, ինչպես նաև ՀՀ սոցիալական առաջնահերթությունները:
4 QUALITY EDUCATION	Որակյալ կրթություն	Տեսլականը ենթադրում է, որ Սևանա լճի կառավարումը պետք է լինի գիտահեն, արդիական և ներառական, ինչը կպահանջի համապատասխան որակի կրթության զարգացում ՀՀ-ում:
5 GENDER EQUALITY	Գենդերային հավասարություն	Տեսլականը ենթադրում է, որ Սևանա լճի կառավարումը պետք է լինի ներառական, իսկ գենդերային հավասարությունը տեսլականի մշակման հիմքում դրված սկզբունքներից մեկն է:
6 CLEAN WATER AND SANITATION	Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ	Կեղտաջրերի մաքրման գրեթե համատարած բացակայությունը (2018թ. մաքրվել է կեղտաջրերի 8,8 տոկոսը) մնում է լրջագույն խնդիր, որն անմիջական ազդեցություն ունի Սևանա լճի ջրի որակի վրա: Տեսլականը ենթադրում է անհրաժեշտ քայլերի ձեռնարկում Գեղարքունիքի մարզում կեղտաջրերի մաքրման արդիական

		լուծումների կիրառման, ինչպես նաև ջրօգտագործման ոլորտի կառավարման որակի շեշտակի բարելավման ուղղությամբ:
	Մատչելի և մաքուր էներգիա	Վերջին տարիներին փոքր ՀԷԿ-երի կառուցումը կարող է ունենալ բացասական ազդեցություն կենսաբազմազանության վրա, այդ թվում՝ Սևանա լճում՝ պայմանավորված ձկնանցարանների որակի և էկոլոգիական թողքի ծավալների ոչ պատշաճ պահպանման հետ:
	Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ	Չնայած 44-օրյա պատերազմին և ՔՈՎԻԴ-19 համաճարակին՝ ՀՀ տնտեսությունն ընդհանուր առմամբ առաջընթաց է արձանագրել այս ԿԶՆ ուղղությամբ: Առավել խնդրահարույց է գործազրկության մակարդակը, որը Գեղարքունիքի մարզում 2019թ. կազմել է 9,3%[3]: Զբաղվածության մակարդակի բարձրացումը և եկամուտների համապատասխան աճը կարող է նպաստել ապօրինի բնօգտագործման երևույթների կրճատմանը, ինչպիսին է, օրինակ, ապօրինի ձկնորսությունը Սևանա լճում:
	Արդյունաբերություն, նորարարություն և ենթակառուցվածք	Մտահոգիչ են գիտական և տեխնիկական ամսագրերում հոդվածների տպագրման (2018թ.՝ 0,2 հոդված 1.000 բնակչի հաշվով) և գիտահետազոտական աշխատանքների համար կատարվող ծախսերի (2018թ.՝ ՀՆԱ 0,2 տոկոս) ցուցանիշները, որոնք հիմնաքարային նշանակություն ունեն Սևանա լճի հետ կապված խնդիրների լուծման համար:
	Կրճատված անհավասարություն	Եկամուտների անհավասարությունը շարունակում է մնալ լրջագույն խնդիր: Այսպես, 2017թ. Ջինիի գործակիցը Հայաստանի Հանրապետությունում կազմել է 47,5, իսկ Պալմայի հարաբերակցությունը 2018թ. եղել է 1,4:[4]
	Կայուն քաղաքներ և համայնքներ	ՀՀ-ն դեռևս անելիքների ունի այս նպատակի մասով. Սևանա լճի հետ կապված խնդիրների լուծման առումով առավել կարևոր է քաղաքային կենցաղային կոշտ թափոնների կառավարման հարցը, որը մնում է խնդրահարույց:

[3] https://employment.am/uploades/Gorcazrk.docx

[4] Համախառն ազգային եկամտի մեջ առավել հարուստ 10 տոկոս բնակչության մասնաբաժնի հարաբերակցությունն առավել աղքատ 40 տոկոս բնակչության մասնաբաժնի հետ:

12 RESPONSIBLE CONSUMPTION AND PRODUCTION	Պատասխանատու սպառում և արտադրություն	ՀՀ-ն ունի բավական լավ արդյունքներ, սակայն դա հավանաբար հիմնականում համեմատաբար ցածր եկամուտների հետևանք է, ուստի անհրաժեշտ են քայլեր եկամուտների աճին զուգահեռ սպառման և արտադրության ոչ կայուն մոդելներին անցնելուց խուսափելու համար:
13 CLIMATE ACTION	Գործողություն՝ ի նպաստ կլիմայի	ՀՀ-ն առավել խոցելիներից է կլիմայի փոփոխության նկատմամբ, ինչն անդրադառնում է նաև Սևանա լճի վրա, որի ջրի ջերմաստիճանի աճը հանգեցնում է էվտրոֆացման երևույթների ինտենսիվացման: Տեսլականի կարևոր բաղադրիչներից է լճի ջրի մակարդակի բարձրացումը, ինչի իրականացումը կարող է առավել բարդ լինել կլիմայի փոփոխության պայմաններում. միևնույն ժամանակ այն կարող է դառնալ կլիմայի փոփոխությանը դիմակայելու կարևորագույն միջոցներից մեկը:
14 LIFE BELOW WATER	Կյանքը ջրի տակ	Սևանա լճի առողջացման կարևորագույն բաղադրիչներից է ստորջրյա կենդանական և բուսական աշխարհի բավարար ծավալը և բազմազանությունը, որի ուղղությամբ անհրաժեշտ կլինի իրականացնել մեծ ծավալի աշխատանք:
15 LIFE ON LAND	Կյանքը ցամաքում	Սևանա լճի ազգային տեսլականին հասնելու առումով կարևոր նշանակություն կունենան նաև ափամերձ հատվածների, ջրհավաք ավազանի ցամաքային էկոհամակարգերը, որոնք ծառայում են որպես լիճը սնող ջրերի զտիչ, որակական և քանակական չափանիշները բարելավող կարևորագույն գործոն:
16 PEACE, JUSTICE AND STRONG INSTITUTIONS	Խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություն-ներ	Թեև ընդհանուր առմամբ այս նպատակի առումով ՀՀ-ն գրանցել է բավարար արդյունքներ, 2020թ. 44-օրյա պատերազմի հետևանքները, ինչպես նաև Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետության սահմանների շարունակվող խախտումները, այդ թվում՝ Գեղարքունիքի մարզում, և պարբերաբար տեղի ունեցող սահմանային զինված բախումները լրջագույն մարտահրավերներ են, որոնք թույլ չեն տալիս լիարժեք ներուժ կենտրոնացնել այլ կարևոր խնդիրների լուծման վրա, այդ թվում՝ կապված Սևանա լճի հետ:

17 PARTNERSHIPS FOR THE GOALS	Համագործակ-ցություն՝ նպատակների համար	Այս նպատակի նշանակությունը Սևանա լճի հետ կապված խնդիրների լուծման համար չափազանց մեծ է՝ հաշվի առնելով խնդիրների բազմաշերտությունը և անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և փորձի պակասը Հայաստանում:

3.2.2. Կառավարության ծրագրեր, օրենսդրություն և ՀՀ միջազգային պարտավորություններ

Տեսլականը համահունչ է առկա ազգային ծրագրային փաստաթղթերում արտացոլված հիմնական մոտեցումներին: Այնուամենայնիվ, առանձին մոտեցումներ ու օրենսդրական կարգավորումներ ենթակա կլինեն որոշակի շտկումների:

Սևանա լճի հիմնախնդրի կարևորությունը, այն լուծելու հանձնառությունը, դրա շրջանակներում բնապահպանական, սոցիալական ու տնտեսական գործոնները հաշվի առնելու անհրաժեշտությունն արդեն իսկ ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է մի շարք միջազգային պարտավորություններ, և Սևանա լճի ազգային տեսլականի ներդաշնակությունը դրանց հետ ապահովված է:

Սևանա լճին առնչվող համապատասխան ազգային և միջազգային փաստաթղթերը, որոնցից բխում են պարտավորությունները, ներկայացված են ստորև:

Աղյուսակ 2. ՀՀ ազգային օրենսդրություն և ստանձնած միջազգային պարտավորություններ, որոնք կապվում են Սևանա լճի ազգային տեսլականի հետ

ՀՀ ազգային օրենսդրություն

- «Սևանա լճի մասին» ՀՀ օրենք
- ՀՀ կառավարության ծրագրի՝ շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղություններ
- «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենք
- ՀՀ ազգային անվտանգության քաղաքականություն

ՀՀ միջազգային պարտավորություններ

- Փարիզյան համաձայնագրի ներքո ՀՀ 2021-2030թթ. ազգային մակարդակով սահմանված գործողություններ, ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 22-ի թիվ 610-Լ որոշում
- Կենսաբանական բազմազանության կոնվենցիայի ներքո ՀՀ պարտավորություններ
- Ռամսարի կոնվենցիա
- 2017թ. ստորագրված Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՀԸԳՀ)

Կարիք կլինի առավել մոտարկել գործող օրենսդրությունը տեսլականին: Օրինակ՝ կարող է անհրաժեշտ լինել տեսլականը արտացոլել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի նախաբանում, մշտադիտարկման անհրաժեշտ մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ կլինեն փոփոխություններ «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքում:

Բացի այդ, անհրաժեշտ է լինելու տեսլականից բխող նպատակներ ու առաջնահերթություններ ներառել հարակից ոլորտների (առնվազն՝ գյուղատնտեսության ու զբոսաշրջության) ռազմավարական փաստաթղթերում, որոնք ներկայում դեռ առհասարակ ուղիղ չեն անդրադառնում Սևանի հիմնահարցերին:

4. Եզրակացություններ

Տեսլականին հասնելու համար անհրաժեշտ հետագա քայլերը ներառում են դրա քննարկումները պետական կառավարման մարմինների հետ, որոնք համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պետք է կազմակերպվեն Շրջակա միջավայրի նախարարության կողմից: Հաշվի առնելով, որ նախագիծը բավական ծավալուն է, իսկ տեսլականների մշակման փորձը Հայաստանում՝ սահմանափակ, գործընթացի արդյունավետության ապահովման առումով կարևոր նշանակություն կունենա նախարարության կողմից իրազեկման միջոցառումների իրականացումը:

Դրանց միջոցով հնարավոր կլինի համապատասխան պետական կառավարման մարմիններին մանրամասն ներկայացնել տեսլականի մշակման նպատակը, տեսլականի տեղը կառավարման գործընթացներում, Սևանա լճի ազգային տեսլականի մշակման կարևորությունը, լճի հետ կապված խնդիրների փոխադարձ կապերը պետական կառավարման տարբեր ճյուղերի, տնտեսական և սոցիալական առաջնահերթությունների և այլ գործոնների հետ:

Օգտակար քայլ կարող է լինել նաև շրջակա միջավայրի նախարարությունում գործընթացը համակարգող խմբի ձևավորումը, որը կմշակի այլ պետական կառավարման մարմինների հետ քննարկումների կազմակերպման ժամանակացույց և դրան համապատասխան կապահովի տեսլականի համաձայնեցման ընթացքը՝ թույլ չտալով, որպեսզի նախագծից դուրս մնան Սևանա լճի էկոհամակարգի առողջացման տեսակետից կարևոր դրույթներ:

Միևնույն ժամանակ, նման քննարկումների կազմակերպումը հիմք կհանդիսանա ներկայում մշակվող տեսլականի իրականացման գործողությունների ծրագրի համաձայնեցման համար, քանի որ պետական կառավարման մարմիններում կձևավորվի Սևանա լճի խնդիրների ընկալման բավարար խորություն:

Համապատասխան օրենսդրական նախագծերի քննարկման փուլում ևս կարևոր նշանակություն կունենան ընդգրկուն քննարկումները, որոնք ցանկալի է իրականացնել ոչ միայն առցանց ձևաչափով, այլ նաև թեմատիկ ֆոկուս խմբերի հետ՝ թե՛ Երևանում, թե՛ մարզերում՝ այդպիսով ապահովելով նախագծի հնարավորին լայն օժանդակում, իսկ պլանավորվող քայլերի իրականացման ընթացքում՝ դրանց նկատմամբ հակազդեցության հնարավորին ցածր մակարդակ:

Սևանա լճի ազգային տեսլականին հասնելու տեսակետից, ի թիվս այլ խնդիրների, առավել մեծ նշանակություն պետք է տալ հետևյալին.

- Սևանա լճի վիճակի գնահատման համար անհրաժեշտ որակյալ տվյալների մշտական հավաքագրման և վերլուծության համակարգի կատարելագործում, այդ թվում Հայաստանում մարդկային կամ տեխնիկական կարողությունների բացի դեպքում՝ միջազգային համագործակցության, լավագույն միջազգային կրթական

հաստատություններում տեղացի մասնագետների պատրաստման և վերապատրաստման միջոցով,

- Սևանա լճի՝ որպես առողջ էկոհամակարգի գիտական նկարագրության մշակում Հայաստանի Հանրապետության և միջազգային համապատասխան կառույցների կողմից՝ հնարավորին հստակ քանակական ցուցանիշների սահմանումով, նման ցուցանիշներին հասնելուն խոչընդոտող մարդածին գործոնների վերհանում և դրանց վերացմանն ուղղված քայլերի սահմանում՝ համապատասխան ժամանակացույցով,
- Արդյունավետ ինստիտուցիոնալ լուծումների մշակում, որոնք թույլ կտան պետական կառավարման համակարգում ստեղծել Սևանա լճի հետ կապված լրջագույն և շատ դեպքերում՝ խիստ հրատապ խնդիրներին համարժեք լիազորություններով և լծակներով մարմին, որը կկարողանա Սևանա լճի խնդիրների լուծման ուղղությամբ անկաշկանդ աշխատանք տանել՝ համագործակցելով համապատասխան գիտական կառույցների հետ, այդ թվում նաև միջազգային մակարդակում,
- Սևանա լճի խնդիրների և դրանց հնարավոր լուծումների երկարաժամկետ ֆինանսա-տնտեսական ազդեցությունների համապարփակ վերլուծություն, այդ թվում՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության կանխատեսվող ազդեցությունները Հայաստանի Հանրապետության և հարևան երկրների ջրային պաշարների վրա, Հայաստանի Հանրապետության տնտեսության առաջնահերթ ճյուղերի, այդ թվում՝ գյուղատնտեսության և շինարարության վրա Սևանա լճի մակարդակի բարձրացման ազդեցությունը, վերջինի արդյունքում Գեղարքունիքի մարզի ենթակառուցվածքների տեղափոխման սոցիալական և տնտեսական ազդեցությունները տեղական համայնքների վրա, հարկային մուտքերի հնարավոր աճը և այլն:

Հավելվածներ

Հավելված 1. Իրավիճակի գնահատման հաշվետվություն

Հավելված 1
Իրավիճակի գնահաա

Հավելված 2. Սևանա լճի ազգային տեսլականի մշակման հիմքում ընկած արժեքներ, հնարավոր սցենարներ և շահագրգիռ կողմերի ակնկալիքներ, հաշվետվություն

Հավելված 2
Սևանա լճի ազգային

Հավելված 3. Սևանա լճի ազգային տեսլականի հաշվետվություն

Հավելված 3
Սևանա լճի ազգային